

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

2011 Թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

№ 2 ՈՐՈՇՈՒՄ

I. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2009-2010 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետով՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հավանության տալ Գավառի պետական համալսարանի 2009-2010 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Գավառի պետական համալսարանի 2009-2010 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2010 թվականի ֆինանսական տարվա գործունեության վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետով՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2010 թվականի եկամուտների և ծախսերի վերաբերյալ ԳՊՀ ռեկտորի հաշվետվությանը:
2. Գավառի պետական համալսարանի 2010 թվականի ֆինանսական գործունեությունը գնահատել բավարար:

III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2011 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան»

պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետով՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2011 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն, համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորին՝ 2011 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

IV. Լսելով և քննարկելով Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի կողմից ներկայացված ԳՊՀ զարգացման և բարեփոխման հնգամյա (2011-2016թթ.) հայեցակարգի և ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագրի (2011-2016թթ.) նախագծերի հիմնական դրույթները՝ ԳՊՀ խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԳՊՀ զարգացման և բարեփոխման հնգամյա (2011-2016թթ.) հայեցակարգը:
2. Հաստատել ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագիրը (2011-2016թթ.):
3. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորին՝ իրականացնել ԳՊՀ զարգացման և բարեփոխման հնգամյա (2011-2016թթ.) հայեցակարգը և ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագիրը:

Խորհրդի նախագահ՝

Հ. Խ. Հակոբյան